

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/3

13 հունվարի 2017թ.

Քննարկվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 18.11.2016թ. թիվ 34/1 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսելու և ըստ էության որոշում կայացվելու հարցը:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 29.07.2016թ. թիվ 1010893 հանձնարարագրի համաձայն «Նաիրիշին» ԲԲԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 18.10.2016թ. թիվ 1010893 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 14.942.684 դրամ, այդ թվում՝ շահութահարկի գծով՝ 14.416.674 դրամ, եկամտային հարկի գծով՝ 526.010 դրամ:

Ընկերության կողմից Ակտի դեմ բերվել է գանգատ, որը քննության է առնվել Հանձնաժողովի 18.11.2016թ. նիստում: Մասնավորապես, գործին առնչվող փաստական հանգամանքների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկել է եզրակացության, որ Ակտի դեմ բերված գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ընկերության կողմից ներկայացված և սույն գործին անմիջականորեն առնչվող փաստաթղթերի վերաբերյալ: Արդյունքում, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով կայացվել է թիվ 34/1 որոշումը, որի համաձայն գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Այսպես, գանգատի քննության ընթացքում ընկերության կողմից ներկայացվել են՝

- «Նաիրիշին» ԲԲԸ-ի (փոխառու) և Յագոր Խերիմյանի (փոխատու) միջև 26.01.2015թ. կնքված փոխառության պայմանագիրը, որի համաձայն փոխատուն ընկերության կարիքների համար վերջինիս հանձնել է դրամական միջոցներ՝ գումարով 40.000.000 դրամի չափով,

- Գագիկ Դիլանյանի (վարձատու) և «Նաիրիշին» ԲԲԸ-ի (վարձակալ) միջև 02.09.2015թ. կնքված վարձակալության պայմանագիրը, որի համաձայն վարձատուն իր սեփականությունը հանդիսացող էքսկավատորը տրամադրել է Վարձակալի ժամանակավոր օգտագործմանը և տիրապետմանը: Վարձակալության գինը սահմանվել է օրական 200.000 դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոգրյալ պայմանագրերը ստուգման ընթացքում չէին ներկայացվել, հետևապես պայմանագրերը դրանցում նշված ամսաթվերին կազմված լինելու հանգամանքը պարզելու նպատակով ուղարկվել են ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ՝ վերջինիս կողմից համապատասխան փորձաքննություն իրականացնելու համար:

Համաձայն 07.12.2016թ. թիվ 53941601 փորձագետի եզրակացության պարզվել է, որ փորձաքննությանը տրամադրված «Նաիրիշին» ԲԲԸ-ի և քաղ. Յագոր Խերիմյանի միջև կնքված 26.01.2015թ. թվագրված փոխառության պայմանագրում, «Նաիրիշին» ԲԲԸ-ի և քաղ. Գագիկ Դիլանյանի միջև կնքված 02.09.2015թ. թվագրված վարձակալության պայմանագրում առկա տպագիր տեքստերի, ոչ գնդիկավոր՝ գելային գրիչով կատարված ստորագրությունների և կլոր կնիքների դրոշմների կատարման բացարձակ վաղեմությունը՝ հնարավոր չէ, համապատասխան մեթոդիկաների բացակայության պատճառով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի «ը» կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Նաիրիշին» ԲԲԸ-ի և Յագոր Խերիմյանի միջև 26.01.2015թ. կնքված փոխառության, ինչպես նաև Գագիկ Դիլանյանի և «Նաիրիշին» ԲԲԸ-ի միջև 02.09.2015թ. կնքված վարձակալության պայմանագրերը դրանցում նշված ամսաթվերին կազմված լինելու հանգամանքը պարզելու անհնարինության պայմաններում «Նաիրիշին» ԲԲԸ-ում անհրաժեշտ է կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում, նշված պայմանագրերից բխող հանգամանքները լրացուցիչ ուսումնասիրելու, մասնավորապես՝ պայմանագրերում արտացոլված գումարներն որպես համախառն եկամտից նվազեցվող ծախս դիտարկելու, հետևապես նաև վերստուգվող ժամանակաշրջանում ընկերության իրական հարկային պարտավորությունների չափը որոշելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 18.11.2016թ. թիվ 34/1 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել:

2. Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 18.10.2016թ. թիվ 1010893 ակտը:

3. Միջնորդություն ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին՝ «Նաիրիշին» ԲԲԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում կատարելու համար:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ